**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.1/44645-2023**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-713-17.11.2023-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1235 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Պետրոս Քացախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-713-17.11.2023-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում (այսուհետ՝ օրենսգիրք) փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն, համաձայն որի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ հանդիսանում է նաև «Պաշտպանության մասին» օրենքի իմաստով՝ աշխարհազորային համարվող անձը, ով ընդգրկված է (ընդգրկված է եղել) «Պաշտպանության մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված գործառույթների կատարմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ աշխարհազորայինը պետք է ներառվի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ բաժնում նախատեսված հանցագործությունների սուբյեկտների շարքում, որպեսզի լուծվի զինված պաշտպանության բնագավառում աշխարհազորայինի գործառույթների դեմ ուղղված հանրորեն վտանգավոր արարքներ կատարած զինծառայող չհանդիսացող անձի՝ աշխարհազորայինի քրեական պատասխանատվության հարցը:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ օրենսդրական փոփոխության ճանապարհով այս հարցին անհրաժեշտ է տալ այնպիսի լուծում, որ ՀՀ քրեական օրենսգրքի «Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները» բաժնի հանցակազմերը չհակասեն դրանց բլանկետային հղումներով վկայակոչվող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքների դրույթներին:

Խնդիրը «զինվորական ծառայության սահմանված կարգ» եզրույթի մեջ է, և դրա հստակեցումը շատ կարևոր է, քանի որ դրանից են կախված նշված բաժնով նախատեսված բոլոր հանցակազմերի օբյեկտին ու օբյեկտիվ կողմին վերաբերող ընդհանուր հատկանիշները:

Բանն այն է, որ վերոնշյալ օրենքների իմաստով աշխարհազորը զինված պաշտպանությանը քաղաքացիների մասնակցության համակարգ է, այլ ոչ թե զինվորական ծառայություն կամ դրա որևէ տեսակ: Զինվորական ծառայության ներգրավումը իրականացվում է կա՛մ զորակոչի (ներառյալ՝ զորահավաքային զորակոչը), կա՛մ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու, կա՛մ էլ վարժական հավաքներին կանչվելու միջոցով, բայց ոչ երբեք՝ աշխարհազորի միջոցով:

Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտների շարքում աշխարհազորայինին նախատեսելու դեպքում, եթե չկատարվեն լրացուցիչ փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան բաժնում, կստացվի մի իրավիճակ, երբ այդ բաժնում նախատեսված բոլոր հանցակազմերը նկարագրված են բլանկետային դիսպոզիցիաներով, մինչդեռ դրանցով վկայակոչվող, տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերն

աշխարհազորը չեն համարում զինվորական ծառայության տարատեսակ, և զինվորական ծառայության կարգը սահմանող որևէ իրավական ակտում աշխարհազորայինը կարգավիճակ չունի: Ուստի կրկին հնարավոր չի լինի նրան ենթարկել քրեական պատասխանատվության, քանի որ չենք ունենա իրավական որոշակիությանը համապատասխանող օրենք:

Գտնում ենք, որ նախագիծը լրամշակելու և ՀՀ քրեական օրենսգրքի ու բլանկետային հղումներով վկայակոչվող օրենքների միջև հակասություններ թույլ չտալու համար կարող են հիմք ընդունվել զինված պաշտպանության ոլորտում աշխարհազորի՝ օրենքով սահմանված գործառույթները (տե՛ս «Պաշտպանության մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերը):

Խնդրահարույց է նաև այն, որ քննարկվող բաժնի հոդվածների գերակշիռ մեծամասնության դիսպոզիցիաներում որպես օբյեկտիվ կողմը կատարող ուղղակիորեն նշված է «զինծառայողը», կամ օբյեկտիվ կողմը բացահայտելու համար օգտագործվում է «ծառայություն» եզրույթը, հետևաբար անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ կատարել այդպիսի հոդվածներում: Սակայն միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել, որ այդ հոդվածներից ոչ բոլորն են նկարագրում այնպիսի արարքներ, որոնք կարող են կատարվել և՛ զինծառայողի, և՛ աշխարհազորայինի կողմից: Բացի այդ, նկատի ունենալով, որ զինվորական ծառայությունը կազմակերպվում է քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության շրջանակներում, իսկ աշխարհազորը կազմակերպվում է քաղաքացիների կամավորության և տարածքային սկզբունքների հիման վրա, հարկ է փաստել, որ նույն արարքն աշխարհազորայինի կողմից կատարվելու դեպքում հանրորեն վտանգավորության այն նույն աստիճանը չի պարունակում, ինչ զինծառայողի կողմից կատարվելու դեպքում է, և երբեմն կարող է հանցագործությանը բնորոշ հանրորեն վտանգավորություն ընդհանրապես չպարունակել:

Հետևաբար, խնդրին պատշաճ լուծում տալու համար առաջարկում ենք նախագիծը լրամշակել հետևյալ ուղղություններով.

1. Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող բաժինը վերանվանել «Զինվորական ծառայության սահմանված կարգի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության դեմ ուղղված հանցագործությունները», քանի որ աշխարհազորայինի կողմից զինված պաշտպանություն իրականացնելիս հանրորեն վտանգավոր արարքի կատարումը ոտնձգում է ոչ թե զինվորական ծառայության սահմանված կարգի, այլ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովմանն ուղղված առանձին խնդիրների ու գործառույթների դեմ:

2. Նախագծի 1-ին հոդվածի՝

1) 1-ին կետով ՀՀ քրեական օրենսգրքի 516-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն բաժնով նախատեսված հանցագործության սուբյեկտը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով, զինծառայող համարվող անձն է (այսուհետ՝ զինծառայող), կամ սույն բաժնի հոդվածի համապատասխան մասով նախատեսված դեպքում՝ «Պաշտպանության մասին» օրենքի

իմաստով, աշխարհազորային համարվող անձը (այսուհետ՝ աշխարհազորային), ով ընդգրկված է Հայաստանի Հանրապետության սահմանների կամ հակառակորդի հետ շփման գծի վտանգված հատվածների զինված պաշտպանությանը, հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողությունների դեմ պայքարին, հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների զինված պաշտպանությանը, զորքերի և բնակչության զանգվածային տեղաշարժի կենտրոնական երթուղիների զինված պահպանությանը և պաշտպանությանը (այսուհետ՝ զինված պաշտպանության ոլորտում աշխարհազորի գործառույթներ)».

2) 2-րդ կետով օրենքի 516-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ մասում «գումարտակների ղեկավարը» բառերն առաջարկում ենք փոխարինել «ստորաբաժանումների հրամանատարները» բառերով:

3. Օրենքի 516-րդ հոդվածը՝

1) լրացնել նոր 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը աշխարհազորայինի կողմից չկատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել, կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով».

2) լրացնել նոր 2.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

3) անզգուշությամբ առաջացրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի առանձնապես խոշոր չափերի ոչնչացում կամ վնասում՝

կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով».

3) լրացնել նոր 3.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Սույն հոդվածի 1.1-ին կամ 2.1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ մարտական առաջադրանքի կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

4. Օրենքի 525-րդ հոդվածը՝

1) լրացնել նոր 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Աշխարհազորայինի կողմից զինված պաշտպանության ոլորտում աշխարհազորի գործառույթների կատարումից ժամանակավորապես խուսափելը՝ գործառույթ-

ների կատարման վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին գործառույթների կատարման վայր չներկայանալը 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ՝ յուրաքանչյուրը մեկ ժամից մինչև 72 ժամ տևողությամբ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով».

2) լրացնել նոր 2.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հրամանատարի (պետի) կողմից՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով».

3) լրացնել նոր 3.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Սույն հոդվածի 1.1-ին կամ 2.1-ին մասով նախատեսված արարքը կատարելը, եթե ինքնակամ բացակայությունը տևել է 240 ժամից ավելի՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով».

4) լրացնել նոր 4.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն հոդվածի 1.1-ին, 2.1-ին կամ 3.1-ին մասով նախատեսված արարքը կատարելը՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) զենքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով».

5) լրացնել նոր 4.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Սույն հոդվածի 1.1-ին, 2.1-ին, 3.1-ին կամ 4.1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով».

6) լրացնել նոր 7-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7. Սույն հոդվածի 1.1-ին, 2.1-ին, 3.1-ին, 4.1-ին կամ 5.1-ին մասով նախատեսված արարքն առաջին անգամ կատարած աշխարհազորայինը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով:»:

5. Օրենքի 526-րդ հոդվածը՝

1) լրացնել նոր 1.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Աշխարհազորայինի կողմից զինված պաշտպանության ոլորտում աշխարհազորի գործառույթների կատարումից վերջնականապես խուսափելու նպատակով գործառույթների կատարման վայրն ինքնակամ թողնելը կամ նույն նպատակով գործառույթների կատարման վայր չներկայանալը՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով».

2) լրացնել նոր 2.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հրամանատարի (պետի) կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով».

3) լրացնել նոր 3.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Սույն հոդվածի 1.1-ին կամ 2.1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն անցկացնող աշխարհազորայինի կամ հրամանատարի (պետի) կողմից կամ

3) զենքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով».

4) լրացնել նոր 4.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն հոդվածի 1.1-ին, 2.1-ին կամ 3.1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով».

5) լրացնել նոր 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Սույն հոդվածի 1.1-ին, 2.1-ին, 3.1-ին կամ 4.1-ին մասով նախատեսված արարքն առաջին անգամ կատարած աշխարհազորայինն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով, կամ եթե նա զինված պաշտպանության ոլորտում աշխարհազորի գործառույթների կատարումից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով ներկայացել է գործառույթների կատարման վայր կամ իրավասու մարմին և պատրաստակամություն է հայտնել շարունակելու գործառույթների կատարումը:»:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1310 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արա Մկրտչյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-713-Ֆ.11.2023-ՊԻ-0810*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈՒՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-713-17.11.2023-ՊԻ-011/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 516-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Սույն բաժնով նախատեսված զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտը՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով, զինծառայող համարվող անձն է (այսուհետ՝ զինծառայող), ինչպես նաեւ «Պաշտպանության մասին» օրենքի իմաստով՝ աշխարհազորային համարվող անձն է՝ ով ընդգրկված է (ընդգրկված է եղել) «Պաշտպանության մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված գործառույթների կատարմանը:»:

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Սույն բաժնում հրամանատար (պետ) է համարվում ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով զինծառայողից բարձր այն անձը կամ զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող անձը կամ աշխարհազորային զորամիավորումների եւ դրանց ենթակա բրիգադների ու գումարտակների ղեկավարը, ով տվյալ իրավահարաբերության շրջանակում եղել է տվյալ զինծառայողի կամ աշխարհազորայինի վերադասը, այսինքն՝ ունեցել է իր լիազորություններից բխող հրամաններ կամ կարգադրություններ տալու կամ դրանց կատարումն ապահովելու իրավասություն:»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

ՀՀ քրեական օրենսգրքի 516-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է համարվում՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով, զինծառայող համարվող անձը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն բաժնում հրամանատար (պետ) է համարվում ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով զինծառայողից բարձր այն անձը կամ զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող անձը, որը տվյալ իրավահարաբերության շրջանակում եղել է տվյալ զինծառայողի վերադասը, այսինքն՝ ունեցել է իր

լիազորություններից բխող հրամաններ կամ կարգադրություններ տալու կամ դրանց կատարումն ապահովելու իրավասություն:

«Պաշտպանության մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխարհազորը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է, իսկ «աշխարհազոր» հասկացության բնորոշումը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-ին կետով, ըստ որի աշխարհազորը՝ դա քաղաքացիների կամավորության եւ տարածքային սկզբունքով զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործող ստորաբաժանումների համալիր է, որում ընդգրկված քաղաքացիները մասնակցում են Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը:

Վերը նշված իրավական դրույթի շրջանակներում աշխարհազորայինները ներգրավվում են մարտական հերթապահության, մարտական առաջադրանքների կատարմանը, ինչի ընթացքում հաճախ հրաժարվում են իրենց պարտականությունների կատարումից, որի արդյունքում առաջ է գալիս վեջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Այնինչ՝ քրեական օրենսգրքի վերոգրյալ նորմը հստակ ամրագրում է, որ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է համարվում՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով, զինծառայող համարվող անձը:

Սույն ձեւակերպման պայմաններում աշխարհազորայինները չեն հանդիսանում զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ, որի պարագայում հնարավոր չի լինում քրեական պատասխանատվության ենթարկել զինվորական ծառայության կարգը խախտած աշխարհազորայիններին:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վարույթում քննվում են մի շարք քրեական վարույթներ, որոնք վերաբերում են աշխարհազորայինների մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոն խախտելուն, սակայն վերջիններիս՝ գործող օրենսդրության համաձայն զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության չհանդիսանալու փաստով պայմանավորված, նրանց նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթները կարճվում են ռեաբիլիտացնող հիմքով: Մասնավորապես՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վարույթում աշխարհազորայինների կողմից կատարված հանցագործություններով քննվող 19 քրեական վարույթներից 17-ը կարճվել են արդարացնող հիմքով, քանի որ՝ վերջիններս հանցագործության սուբյեկտ չեն հանդիսանցել:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը.**

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հստակ ամրագրելով, որ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է հանդիսանում նաեւ «Պաշտպանության մասին» օրենքի իմաստով՝ աշխարհազորային համարվող անձը:

**3.Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում՝ օրենսդրորեն կամրագրվի աշխարհազորայինների՝ որպես զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտի կարգավիճակը, ինչը հնարավորություն կընձեռի պատշաճ իրավական գնահատական տալ վերջիններիս կողմից թույլ տրված խախտումներին եւ լուծելու գործնականում առաջացող խնդիրները:

**4.Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության եւ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.**

Նախագծերի ընդունմամբ ՀՀ պետական բյուջեի եկամուտների եւ ծախսերի փոփոխություններ չի նախատեսվում:

**5.Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին.**

Նախագծերի ընդունմամբ անհրաժեշտություն չի առաջանալու կատարել փոփոխություն ոլորտային ենթաօրենսդրական ակտերում:

**6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ոլորտային եւ/կամ այլ ռազմավարություններ.**

Նախագծի ընդունումն ուղղակիորեն չի բխում ռազմավարական փաստաթղթերից: